

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՍԵՎ ՄԵՏԱՂԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ
ՄԻՔԱՅԵԼ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՍՄԿԿ XXVII համագումարը կոնկրետ խնդիրներ դրեց երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառում, առաջադրեց ժողովրդական տնտեսության խոր վերակառուցման ծրագիր, որի հիմնադրույթներից մեկն էլ նյութական ռեսուրսների խնայողական օգտագործումն է: Ինչպես նշվեց համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի տված Քաղաքական զեկուցման մեջ, «էկոնոմիկայի ռեզերվները հսկայական են: Դրանցից շատերի օգտագործմանը մենք գեո ինչպես հարկն է ձեռնամուխ չենք եղել: Տարբեր մակարդակների ղեկավարների զգալի մասի հոգեբանությունը ձևավորվել է ռեսուրսների առատության պայմաններում: Նման հարստությունը շատերին է երես տվել, հանգեցրել վատնողության: Բայց վիճակը վաղուց փոխվել է: Չկա աշխատուժի նախկին հոսքը, մենք սկսել ենք թանկ վճարել յուրաքանչյուր տոննա նավթի, հանքաքարի, ածխի հանույթի և փոխադրման համար: Այս փաստերը չի կարելի չնկատելու տալ, դրանց հետ պետք է հաշվի նստել: Եվ տնտեսել ամեն ինչում և ամենուրեք՝ արտադրությունում և կենցաղում, անտարբե՞ր շանցնել անտնտեսավարության ու վատնողության կողքով»: Իրաք, որ խնայողությունն ամենուրեք և ամեն ինչում պետք է արմատավորվի ոչ միայն տնտեսության բնագավառում աշխատող ղեկավարների, այլև յուրաքանչյուր ատվետական մարդու հոգեբանության մեջ: Տեխնիկական առաջընթացի ռեսուրսախնայողական ուղղությունն ապահովում է հասարակական արտադրության փոխադրումը նրա աճի առավելապես ինտենսիվ ուղիները: Դա նշանակում է այնպիսի որակական փոփոխություններ, որոնց հետևանքով արտադրության աճը, այսինքն՝ նրա վերջնական արդյունքների մեծացումը, առաջ է անցնում օգտագործվող ռեսուրսների գումարային աճից, ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործման հետևանքով բարձրանում է արդյունքների հավելաճի տեսակարար կշիռը և դառնում է գերակշռող:

Նյութական ռեսուրսների խնայողական օգտագործման համակարգում կարևոր տեղ ու դեր ունի երկրորդային հումքի և թափոնների օգտագործումն արտադրության մեջ: Այս խնդրի կարևորության մասին ասված է «ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 1986—1990 թթ. և մինչև 2000 թ. ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների մասին» համագումարին տրված զեկուցման մեջ: «Հեռանկարում երկրորդային հումքի տեսակարար կշիռը նախատեսվում է էապես բարձրացնել և հասցնել միջին հաշվով առնվազն 10-12 %, — նշված է այնտեղ: — Մինիստրությունների և միութենական հանրապետությունների ղեկավարները պետք է արմատապես փոխեն վերաբերմունքը այդ գործի նկատմամբ: Հաճախ նրանք պատկերավոր ասած, նստած են լինում հսկայական հարստության վրա և միևնույն ժամանակ զանգատվում, թե հումքը չի բավարարում: Չի կարելի նաև մոռանալ այն հսկայական վնասի մասին, որ նման դեպքում պատճառվում է շրջակա միջավայրին: Երկրորդային ռեսուրսների օգտագործմանը սկզբունքային, պետական դիրքերից են պարտավոր մոտենալ ՍՍՀՄ պետպլանն ու ՍՍՀՄ պետմատը»: Փաստորեն երկրորդային ռեսուրսների օգտագործման հսկայական նշանակությունն արտահայտվում է սոցիալ-տնտեսական խոշոր արդյունքով:

1 «Սովետական Հայաստան», 26. II. 1985:

2 Նույն տեղում, 4. III. 1986:

Դա և՛ արտադրանքի ինքնարժեքի իջեցումն է, արդյունաբերության արդյունահանող ճյուղերում կապիտալ ներդրումների կրճատումը, արդյունաբերության հումքային բազայի ընդլայնումը, հասարակական արտադրության նյութա և էներգատարության նվազեցումը և՛, վերջին հաշվով, աշխատանքային ծախսումների կրճատումը միավոր արտադրանքի արտադրության վրա, այսինքն՝ հասարակական աշխատանքի խնայողությունը: Վերը նշված առավելությունները վերաբերում են երկրորդային ռեսուրսների օգտագործման տնտեսական բնագավառին: Բայց դրանց օգտագործումն ապահովում է նաև սոցիալական մեծ արդյունավետություն, որոնցից են նախ և առաջ շրջակա միջավայրի աղտոտումից առաջացած վնասի կանխումը, ինչպես նաև երկրորդային հումքից արտադրված լայն սպառման ապրանքների տեսականու աճը: Երկրորդային ռեսուրսների օգտագործումն ապահովում է նաև խոշոր էկոլոգոտնտեսական արդյունավետություն, որն արտահայտվում է հետագա ժամանակաշրջանում: Դա նաև բնակչության հիվանդացության իջեցումն է, սարքավորումների կոռոզիայի կրճատումը, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասնապահության մթերատվության աճը, կենդանական աշխարհի և անտառների պահպանումը, խմելու ջրի և հողերի էրոզիայի պրոբլեմի լուծումը: Այսպիսով, երկրորդային հումքի օգտագործումն ապահովում է բարձր արդյունավետություն՝ թափանցելով հասարակական արտադրության բոլոր բնագավառները: Միայն 1985 թ. մեր երկրում երկրորդային ռեսուրսների օգտագործումից ապահովվել է մոտ 13 մլրդ ռուբլու արդյունավետություն³:

Բայց նախքան երկրորդային հումքի օգտագործման պրակտիկ պրոբլեմներին անցնելը, ասենք, որ երկրորդային ռեսուրսների ճիշտ հաշվառման, դրանց առաջացման ու օգտագործման պլանավորման կազմակերպումը անհնար է պատկերացնել առանց «երկրորդային նյութական ռեսուրսներ», «երկրորդային հումք» հասկացությունների ճիշտ ու հստակ բնորոշման: Ներկայումս տնտեսագիտական գրականության մեջ միասնական կարծիք չկա այս հարցի վերաբերյալ: Դեռ ավելին, այդ կարծիքներից շատերը հակասում են միմյանց: Որոշ տնտեսագետներ երկրորդային ռեսուրսների մեջ չեն ընդգրկում գյուղատնտեսության և կապիտալ շինարարության, ինչպես նաև շրջանառության ոլորտներում առաջացող թափոնները⁴, տնտեսագետների մի այլ խումբ, փաստորեն, նույնացնում է «երկրորդային ռեսուրս» և «երկրորդային հումք» հասկացությունները, որոնք էպպես տարբերվում են միմյանցից⁵: Այդ բոլոր հարցերին հստակ պատասխան է տալիս 1985 թ. հունվարի 1-ից գործողության մեջ մտած պետական ստանդարտը՝ «նյութական երկրորդային ռեսուրսներ: Տերմիններ և բնորոշումներ»: Ըստ ստանդարտի երկրորդային նյութական ռեսուրսներն արտադրության և սպառման թափոններն են, որոնք առաջացել են ժողովրդական տնտեսության մեջ: Երկրորդային հումքն այն երկրորդային նյութական ռեսուրսներն են, որոնք այժմ կարող են օգտագործվել ժողովրդական տնտեսության մեջ:

Որպեսզի ցույց տանք, թե ինչպիսի հսկայական ծավալի երկրորդային ռեսուրսներ են անվերադարձ կորչում, ասենք, որ գործնականում մշակման և վերամշակման ենթակա շատ թափոններ տարիներով մնում են դրանց համար «հատկացված» լցակույտերում: Թափոնները ժամանակի ընթացքում հողմահարվում են, կորցնում իրենց ֆիզիկաքիմիական հատկությունները,

³ «Ներկայիս Երևան», 13. 11. 1986:

⁴ «Определение экономической эффективности использования отходов производства», Киев, 1981, с. 6; И. Д. Селитренников, Организация сбора и использования вторичного сырья в народном хозяйстве, М., 1978, с. 8.

⁵ К. Ш. Байкуатова, Вторичное сырье—эффективный резерв материальных ресурсов, Алма-Ата, 1982, с. 18; С. Е. Казарина, Статистика окружающей среды, М., 1981, с. 121.

փոշիանում, քայքայվում և, փաստորեն, դառնում ոչ պիտանի՝ հետագա օգտագործման համար: Օրինակ, «Արթիկտուֆ» արտադրական միավորման քարհանքերի շրջակայքում սկսած 1928 թ. կուտակվել են ավելի քան 18 մլն խմ տուֆաքարի թափոններ⁶ (խճի, ավազի տեսքով), որոնք քամահարման, հողմահարման ենթարկվելով փոշեցրվում են՝ կորցնելով իրենց պիտանի հատկությունները և աղտոտելով շրջակա միջավայրը: Նույնը կարելի է ասել հանրապետության գունավոր մետալուրգիայի, քիմիական, սննդի և արդյունաբերության մյուս ճյուղերում առաջացած հսկայական ծավալի թափոնների մասին: Այս ամենը վկայում է երկրորդային ռեսուրսների օգտագործման հրատապությունը, դրանց հաշվառման, օգտագործման պլանավորման, խլթանման, գնագոյացման և ստանդարտացման համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը: Բերենք միայն մեկ օրինակ. հանրապետության շինանյութերի արդյունաբերության համակարգում բնական քարանյութերի արդյունահանման ժամանակ առաջացել են միլիոնավոր խմ թափոններ: Մեծ քանակությամբ թափոններ են կուտակվել նաև Քաջաբանի, Ղափանի, Ագարակի, Զոգի և Ալավերդու լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունների շրջակայքում: Հանրապետության գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների միայն հարստացուցիչ ֆաբրիկաների այսպես կոչված «մրնացուկները» տարեկան կազմում են 15 մլն խմ⁷: Բայց առաջացած թափոնների հաշվառում, դրանց պիտանիության ստուգում երբեք էլ չի կատարվում, որի հետևանքով դրանց մեծ մասն անվերադարձ կորչում է: Եղած ռեսուրսների մասին ռեալ ինֆորմացիա չի ստացվում, սրը դրանց օգտագործման ցածր պլանային առաջադրանքների սահմանման պատճառ է դառնում:

Մեր հանրապետության համար երկրորդային հումքի լրիվ և ռացիոնալ օգտագործումն առանձնահատուկ նշանակություն ունի, առավել ևս, որ ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ օգտագործվող սև մետաղներն ամբողջապես, և գունավոր մետաղների մեծ մասը մատակարարվում է երկրի հեռավոր շրջաններից:

Մետաղների թափոնների և ջարդոնի մթերումը, վերամշակումը և իրացումը մեր հանրապետությունում իրականացնում է ՍՍՀՄ սև մետալուրգիայի մինիստրության «Սոյուզվտորչերմետ» համամիութենական միավորման հայկական հանրապետական «Վտորչերմետ» արդյունաբերական ձեռնարկությունը: Միայն 1985 թ. հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններից մթերվել է 231257 տոննա սև մետաղների թափոններ և ջարդոն, այսինքն 10 հազ. տոննայով ավելի, քան 1981 թ.⁸: Մթերվող ջարդոնի և մետաղյա թափոնների կազմում ավելի քան 85% -ը բաժին է ընկնում պողպատե ջարդոնին, իսկ մնացած մասը կազմում են պողպատյա և շուգունի տաշեղները, շուգունի ջարդոնը, դոմնային ձուլախառնվածքը:

Երկրորդային սև մետաղային հումքի հիմնական աղբյուրներ են հանրապետության էլեկտրատեխնիկական, հաստոցաշինական և ավտոմոբիլային արդյունաբերության ձեռնարկությունները: 1985 թ. դրանցից համապատասխանաբար մթերվել է 43350, 22272 և 10409 տոննա ջարդոն և սև մետաղների թափոններ⁹: Մեծ քանակությամբ մետաղե ջարդոն է առաջանում նաև գյուղատնտեսության տեխնիկական ապահովման համակարգում: 1985 թ. այստեղից մթերվել է շուրջ 18 հազ. տոննա ջարդոն¹⁰: Այսպիսով, երկրորդային մետաղային հումքի առաջացման հիմնական աղբյուր են հանրապետության մեքենաշինական ձեռնարկությունները, իսկ մեզ մոտ հենց այդ ճյու-

⁶ С. А. Мелкумян, Индустрия камня Армянской ССР, Ереван, 1984, с. 138.

⁷ Ս. Ա. Մեկումյան, Քարը մեր հարստությունն է, Երևան, 1985, էջ 201:

⁸ Տվյալները վերցված են ՀՍՍՀ «Վտորչերմետ» հանրապետական արդյունաբերական միավորումից:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

ղերը պետք է հեռանկարում առավել առաջանցիկ տեմպերով աճեն, որպես գիտատեխնիկական առաջադիմությունը որոշող և աշխատատար ճյուղեր: Հետևաբար, հետագայում այստեղ մետաղյա ջարդոնի ծավալներն ավելի կաճեն: Մյուս կողմից էլ, հենց այս ճյուղերի ձեռնարկություններն են սև մետաղների հիմնական սպառողները:

Հայկական ՍՍՀ-ն իր արդյունաբերության պահանջը սև մետաղների նրկատմամբ ամբողջապես բավարարում է Ուկրաինայից, Ուրալից, Արևմտյան Միբրից և երկրի այլ հեռավոր շրջաններից բերվող հումքի հաշվին: Հանրապետությունն այդ շրջաններից տարեկան ստանում է մոտ 1 մլն տոննա սև մետաղներ, իսկ 1 տոննա պողպատի միայն տրանսպորտային ծախսերը կազմում են 5—20 դոլար¹¹: Միևնույն ժամանակ ամեն տարի հսկայական քանակությամբ սև մետաղների թափոն և ջարդոն է ուղարկվում հանրապետությունից դուրս: Միայն 1985 թ. 76 հազ. տոննա ջարդոն է ուղարկվել Ռուսիայի մետալուրգիական կոմբինատ, 72 հազ. տոննա՝ Տաբանրոդի մետալուրգիական կոմբինատ¹²: Մեր հանրապետությունից այդպիսի հումք է ուղարկվում նաև Դնեպրոպետրովսկի, Չելյաբինսկի, Նովոլիպեցկի և այլ հեռավոր շրջանների մետալուրգիական ու մեքենաշինական ձեռնարկությունները: Սա թույլ է տալիս եզրակացնելու, որ երկրորդային սև մետաղային հումքի բազայի վրա մեր հանրապետությունում վերամշակող մետալուրգիական գործարանի կառուցումը ժամանակի ռեալ պահանջն է:

Առաջացող բոլոր մետաղաթափոնների առավելագույն օգտագործումն ունի ժողովրդատնտեսական մեծ նշանակություն: Մեր երկրում արտադրված ամբողջ պողպատի կեսը ձուլվում է մետաղի ջարդոնից: Հաշվարկները ցույց են տալիս, որ 1 տոննա պողպատի ձուլումը մետաղե ջարդոնից, համեմատած հանքա-ֆլյուսային հումքից նույնքան պողպատի ձուլման հետ, տալիս է հետևյալ խնայողությունը¹³. էլեկտրաէներգիա, կվտ/ժ՝ 179,6, թթվածին, խմ՝ 94,9, ջուր, խմ՝ 79,3, բնական գազ, խմ՝ 174,8, քարածուխ, տ՝ 0,8, կրաքար, տ՝ 0,4, երկաթի հանքաքար, տ՝ 2:

Մետաղե ջարդոնի ձուլման ժամանակ կրճատվում են նաև մթնոլորտ արտանետվող վնասակար գազերն ու փոշիները, ցածր է առաջացող արտադրական թափոնների քանակը: Ուտի, սև մետաղների և հատկապես էլեկտրապողպատի արտադրության աճը 12-րդ հնգամյակում պահանջում է մետաղի ջարդոնի մթերման աճ և երկրորդային սև մետաղային հումքի բոլոր տեսակների առավելագույն օգտագործում:

Հայկական հանրապետական «Վտորչերմետ» արդյունաբերական ձեռնարկությունը մետաղների երկրորդային հումքի մթերման, վերամշակման և իրացման գործն իրականացնում է իրեն ենթակա Երևանի արտադրամասում, Լենինականի, Կիրովականի և Ղափանի տեղամասերում: Սակայն Երևանի արտադրամասը չի ապահովում ստացվող մետաղաջարդոնի վերամշակումը, քանի որ վաղուց արդեն գերազանցել է իր նախագծային 50 հազ. տոննա վերամշակման տարեկան հզորությունը: Վերջին շրջանում այն տարեկան ընդունում է մինչև 90 հազ. տոննա ջարդոն և ամեն տարի մթերման ծավալն ավելանում է: Երևանյան արտադրամասն ամբողջապես գերբեռնված է, պահեստային տարածքի ընդլայնման բոլոր ռեզերվները սպառված են, որի հետևանքով գարնան և եռամսյակների վերջին ամիսներին, ինչպես նաև տարեվերջին արտադրամասի ամբողջ տարածքը ծածկվում է մետաղաջարդոնով: Դա անհնար է դարձնում ջարդոնի մնացորդների նորմատիվների և դարսա-

11 Տվյալները վերցված են ՀՍՍՀ Նյութատեխնիկական մատակարարման պետական կոմիտեից:

12 Տվյալները վերցված են ՀՍՍՀ «Վտորչերմետ» հանրապետական արդյունաբերական միավորումից:

13 «Руководящие материалы по заготовке, переработке и поставке вторичных черных металлов», т. I, М., 1982, с. 7.

կուտման բարձրության պահպանումը, որն էլ բացասաբար է անդրադառնում վերամշակման տեխնոլոգիայի ու անվտանգության տեխնիկայի վրա: Այդ ժամանակահատվածներում սահմանափակվում է ջարդոնի ընդունումը, իսկ ընդունվածների մեծ մասը բեռնվում է առանց նախապատրաստման: Դրությամբ էլ ավելի կբարդանա արտադրամասի տեխնիկական վերադիմումից հետո, երբ կտեղադրվեն ավելի հզոր սարքավորումներ և, բնականաբար, ջարդոնի պահեստային մնացորդը կմեծանա՝ այդ հզորության պահպանման համար: Արտադրամասը գտնվում է «էլեկտրոն» գործարանի ու հանրապետական առևտրական բազաների միջև և տարածքային տեսանկյունից չի համապատասխանում արդի պահանջներին: Ելնելով քաղաքի հեռանկարային զարգացման և այդ կազմակերպության աճող պահանջներից, նպատակահարմար է այն տեղափոխել քաղաքից դուրս և տեղաբաշխել ավելի հարմար տարածքում:

Վերը նշվածը թույլ է տալիս սսելու, որ պրոբլեմի ռացիոնալ լուծումը կապված է արագ զարգացող Չարենցավանում նոր վերամշակող արտադրամասի ստեղծման հետ: Այն Չարենցավանում կառուցելը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից են՝ 1. Սևանի ավազանի շրջաններից Երևանի արտադրամաս մետաղաջարդոնի բերման ավտոմոբիլային փոխադրումների բարձր արժեքը 100—150 կմ և ավելի հեռավորությունից: 2. Այդ նույնը երկաթուղային տրանսպորտով Երևանից մինչև Ռուսթավի և երկրի այլ մետալուրգիական գործարաններ փոխադրելը: 3. Չուլման համար պատրաստ հումքի ստացման ավելացումը, Սևանի ավազանի մետաղաջարդոնի լրիվ վերամշակումը: 4. Բենզինի, դիզելային վառելիքի և քսանյութերի ծախսի կրճատումը: 5. Համատեղ շահագրգռված կազմակերպությունների ջանքերով նոր արտադրամասի կառուցումը: 6. Մեքենաների հերթերի կրճատումը, քաղաքային տրանսպորտի աշխատանքի բարելավումը «Վտորչերմետ» Երևանի արտադրամասին հարող շրջաններում: 7. Ապրանքային արտադրանքի ինքնարժեքի իջեցումը, շահույթի ավելացումը:

Չարենցավանում շարք մտնելիք արտադրամասը կարող է մինչև 50 հազ. տոննա տարեկան հզորություն ունենալ: «Վտորչերմետ» հայկական հանրապետական արդյունաբերական ձեռնարկությունում կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ Չարենցավանում մթերող-վերամշակող նոր արտադրամասի շահագործումից ստացված տարեկան օգուտը կկազմի 89 հազ. ռուբլի:

ИСПОЛЬЗОВАНИЕ ВТОРИЧНОГО СЫРЬЯ ЧЕРНЫХ МЕТАЛЛОВ В АРМЯНСКОЙ ССР

МИКАЕЛ МЕЛКУМЯН

Резюме

Весь объем черных металлов (ежегодно до 1 млн. тонн) завозится в республику с Украины, Урала, Западной Сибири и др. дальних районов СССР. Больше половины объема вторичных черных металлов в нашей республике образуется в машиностроительных отраслях промышленности, которые и являются основными потребителями металла. Учитывая тот факт, что в 1985 г. в республике было заготовлено свыше 230 тонн вторичного сырья черных металлов, а в перспективе намечается тенденция увеличения этого объема, целесообразно создать в республике перерабатывающий металлургический завод. Одним из путей рационального использования вторичных черных металлов в Армянской ССР является строительство нового производственного цеха «Вторчермет» в г. Чаренцаване.